



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅ
ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՂՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐԸ Ա. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՄԱՅՐ
ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Դառն ու ծանր է եղել հայ ժողովրդի նախատագիրը: Դարեր շարունակ նրա գլխի վրա կախված է եղել, ամեն ինչ խաղաղեցնող մահվան նման, տեղահանման, ձուլման, ոչնչացման սարսափը:

Հայի միակ մտածումն է եղել ֆիզիկական գոյության և ազգային ուրույն նկարագրի անաղարտ պահպանումը: Նրա փրկության միակ գրավականը եղել է իր հոգում փայփայած հայրենիքի վառ երազանքը և լույսի խորան սուրբ եկեղեցին: Ընդդիմ չէր տեսլականի և գաղափարի նա ապրել ու ստեղծագործել է և հավատացել պայծառ գաղիքի շենշող օրերին. «Հատաք թո կեցուցին գրեզ»:

Այսօր էլ ազգաբնակչության գործի պատասխանատվությունը առավելապես իրենց վրա են կրում, Մայր Աթոռի գլխավորությամբ, Հայաստանյայց ա. եկեղեցին և մայր հայրենիքը:

Հայաբնակչության արդյունավետ նախաձեռնումներից մեկն է, արդեն ավանդություն դարձած, Ամերիկահայ եկեղեցուներ երիտասարդաց կազմակերպության ուխտագնացությունը դեպի Մայր Աթոռ ա. Էջմիածին և դեպի մայր հայրենիք:

Ամերիկահայ եկեղեցուներ երիտասարդաց կազմակերպության առաջին ուխտագնացությունը դեպի ա. Էջմիածին և մայր հայրենիք եղավ 1970 թվականին, սույն կազմակերպության 25-ամյակի առթիվ՝ հայրական հրավերով Ամենայն Հայոց կաթողիկոսի: Կազմակերպության 25 անդամ-անդամուհիներ ծնրադեցին ու աղոթեցին հայ հավատարի կենտրոն ա. Էջմիածնի լուսեղեն խորանների առաջ, ստացան Հայոց Հայրապետի օրհնությունը: Հայրենի երկրում ապրանառնա եղան վերածնված հայ ժողովրդի կյանքի զարգացման վերելքին, հետևեցին

հայոց լեզվի, ազգային երգի և պարի դասընթացներին: Ծրջագայեցին հայրենի երկրում, ըմբռնեցին հայրենի բնության գեղեցկությունները, ծանոթացան հայ ժողովրդի ստեղծագործ մտքի և շինարար ձեռքերի արվեստին, զգացին իրենց հանճարեղ ժողովրդի մեծությունն ու վեհությունը, ապրեցին հայ լինելու հպարտությունը:

Ուխտագնացությունը նրանց հոգեփոխեց. նրանք մկրտվեցին հայկական շնչով և ապրեցին կյանքի մի նոր վերածնունդ: Խանդավառվեցին հայրենի երկրի ծաղկուն առօրյայով ու վերադարձին այնտեղ նույն հրով բոցավառեցին ամերիկահայ գաղութի հայրենամարտի հոգիները:

Նույն հոգատար և ոգևորող վերաբերմունքին արժանացան նաև երկրորդ ուխտագնացության խմբի 22 անդամ-անդամուհիներ՝ ղեկավարությամբ Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի հայոց առաջնորդ տ. Թորգոս արքեպ. Մանուկյանի:

Երկրորդ խմբի անդամները նույնպես հայրենիքից մեկնեցին անմոռանալի հուշերով և լավագույն տպավորություններով:

Օրեր առաջ էր դեռ, երբ Հայաստանին և Մայր Աթոռ ա. Էջմիածնին հրաժեշտ տվեց ուխտագնացության երրորդ խումբը, որը բաղկացած էր 21 անդամ-անդամուհիներից: Ինչպես մյուսները, սրանք ևս համարվում էին Վեհափառ Հայրապետի հյուրերը: Մեկամսյա ուխտագնացության համար Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն պատրաստել էր հատուկ ծրագիր, որն ամբողջականորեն և հաջողությամբ ի կատար ածվեց:

Երիտասարդների այս խումբը նույնպես հետևեց հայոց լեզվի, երգի և պարի հատուկ դասընթացներին:

Նրանք եղան Հայաստանի հետևյալ գե-

դաստեսի վայրերում. Դիլիջան, Հաղարծին, Բջնի, Ծաղկաձոր, Կեչառիս, Սևան, Կիրովական, Վայոց ձոր, Աշտարակ, Ապարան, Լուսապետ, Գանձի, Գեղարդ, Արզնի, Ծշական և այլուր:

Բազմիցս նրանք եղան երկույցների, թատրոնների, օպերաների, երգի և պարի համերգների, դիտեցին Երևանի ճոխ պատկերասրահը, պատմության և արվեստի թանգարանները, եղան Մատենադարանում, ունեցան հանդիպումներ և գրույցներ հայ արվեստագետների և գրողների հետ: Յուրաքանչյուր վայր, երևույթ կամ դեպք նրանց հոգում առաջացնում էր հայրենաշունչ զգացում:

Հուլիսի 28-ին ամերիկահայ երիտասարդ ուխտագնացները ներկա գտնվեցին ս. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվող պատարագին: Պատարագիչն էր խմբի ղեկավար, ԱՄՆ-ի Ապրիմոֆիոյ քաղաքի հայոց հոգևոր հովիվ տ. Ներսես քհն. Մեպեճյանը:

Եկեղեցին լեկ-լեցուն է հավատացյալներով: Վանքի երգչախումբը երգում է «Սուրբ, սուրբ», «Հայր մեր», «Օրհնեսալ է Աստուած» հոգեցունց մեղեդիները: Խնկարույր երգը արձանացրել էր երիտասարդներին: Նրանք լուռ են, ինքնամոխի և վերացած: Նրանց հանելի դեմքերը գեղեցկացել և լույս են ճառագայթում սողոթի ստինքնող ազդեցությունից: Եկեղեցու նվիրական կամարների տակ մեղմ և քնքշագին հնչում է Եկմայականի «Տէր, ողորմես»-ն: Երիտասարդները ծընրադիր, հայացքները երկինք հատած աղոթում են՝ «Տուղի եղիցին աղօթք իմ, որսլես խունկ առաջի քո, Տէր»:

Հաղորդության պահն է, բոլորը երկյուղածությամբ մոտենում են սուրբ Սեղանին, հաղորդվում Քրիստոսի մարմնով և արչամբ:

Ս. պատարագի վերջում կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ նրանց մեջեցյալների:

Հավարտ ս. պատարագի բոլորը, եկեղեցական թափոթի հետ միասին, դիմում են դեպի Վեհարան:

Սրտատուչ էր ամերիկահայ երիտասարդների հանդիպումը ազգիս Հայոց Հայրապետի հետ: Երիտասարդները գոհունակության ժպիտը դեմքերին հերթով մոտենում են՝ ի համբույր Հայոց Վեհափառի Աջին և որդիական սիրով ու խոնարհությամբ սպասում նրա պատգամին և օրհնությանը:

Վեհափառ Հայրապետը հոգումով և գո-

հունակությամբ ողջունում է նրանց և տալիս սիրով էր խրատները, բացատրում ազգապահպանման պատասխանատու գործի կարևորությունը և նշանակությունը ու եկեղեցաներ երիտասարդաց միության դերը այդ հայրենաշեն գործում:

Երիտասարդները հոտնկայս և հալիշտակված ունկնդրում են Հայոց Հայրապետի խոսքերն ու պատգամը:

Վերջում Հայոց Հայրապետը բաշխում է էր օրհնությունը և հրավիրում երիտասարդ ուխտավորներին Վեհարանի այգու տաղավարի տակ մրգասեղանի շուրջ շարունակելու հոգեշեն գրույցը: Մրգասեղանին մասնակցում են նաև Մայր Աթոռի երիտասարդ միաբան վարդապետներն ու սարկալագները:

Երիտասարդները խմբովին երգում են հոգևոր տաղեր և վերջում՝ «Հայր մեր»-ը: Մեղմ հովի թևերին բազմած դեպի հավերժություն են թռչում հավատավոր և հայրենակարոտ ձայների թրթիռները: Ակամս հանձնվում են մտածումների: Աչքիդ առջև վեր է հասնում հայ ժողովրդի պատմությունը իր սև էջերով: Մեկ անգամ ևս քեզ համար պարզվում է հայության գոյատևման հրաշքը:

Հյուրասիրությունն անցնում է ուրախ մրթնոլորտում, բարձր տրամադրությամբ, հանելի և բովանդակալից:

Հավաքույթը մոտենում է ավարտին, երիտասարդները հրաժեշտի համբույրն են դրողմում Վեհափառի Աջին և արցունքալիված աչքերով մեկնում:

Այդ պահին հիշեցի Գևորգ Էմինի «Երգ կունկի մասին» բանաստեղծության հետևյալ տողերը.

«Եկար, նորոգ բույնըդ գտար ու չվում ես Ափերն օտար,
Որ ծա՛մ առաջ փրկես մահից ու օտարից
Քո ձագերին:

.....
Գնա՛, շրջի՛ր երկրե-երկիր ու ե՛տ դարձիր,
Բարո՛վ դառնաս,
Կանչի՛ր բոլոր պանդուխտներին ու ե՛տ դարձիր,

Բարո՛վ դառնաս,
Դարձիր այնպե՛ս, որ ո՛չ մի տեղ, ո՛չ մի պանդուխտ

Քեզ չսպասի,
«Կունկ, ուստի՞ կուզաս» չասի՛ ու չլացի՛...
Բարո՛վ դառնաս...»:

ԿՏԲԻՃ ՄՐԿ. ՆԵՐՍԻՍՅԱՆ